

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՆԵՐԿԱՅ 1889 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոպագանդայով: Մենք տալիս ենք սեփական ձեռքով: Տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսականը 6 ռուբլ է:
Գրվել է ՄՇԱԿԻՆՆԻ կարելի է խմբագրութեանը (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում Թամարայի տանը):
Կայսրութեան ուրիշ քաղաքներից ՄՇԱԿԻՆՆԻ գրվելու համար պէտք է գիտնել հետևեալ հասցէով. ТИФЛИСТЬ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՎԱԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐԸ պատիւ ունի յայտնելու ընդհանուր գիտութեան, որ համեմատ Թիֆլիսի Դուստայի ղեկավարների 19-ին, 1888 թվի կաշառած որոշման, ԱՅՍՈՐ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, փետրվարի 16-ին, առաւօտեան ժամը 11 1/2-ին, ՎԱՆՔԻ մայր-եկեղեցում կատարվելու է հոգեհոգիական հանգուցիալ կոմս ՄԻԿԱԵԼԻ ՏԱՐԻԷԼԵԱՆԻ ԼՈՐԻՍ-ՄԷԼԻՔՈՎԻ յիշատակին և օրհնվելու է նրա գերեզմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միայն հասկացողութիւն. — ՆԵՐԿԱՅ ՏԵՄԻՆՈՒԹԻՒՆ. Նամակ Ախալցխայից. Նամակ Երևանից. Նամակ Խոնքայից. Ներքին լուրեր. — ԱՐՍՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՆԻՒՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սալմէ Նորատուկեան:

ՍՈՒՍԼ ԶԱՍԿԱՅՈՂՈՒԹԻՒՆ

Տպելով «Մշակ» ներկայ համարում խմբագրին ուղղված նամակը Բաֆֆի գրութեանը վերաբերմամբ, պարտաւորութիւն ենք համարում պատասխանել և ուղղել նամակի մէջ յայտնված սխալ կարծիքները և Բաֆֆի մահից յետոյ թողված զրական հեղինակութիւնների հրատարակման ձևի մասին նամակագրի սխալ հասկացողութիւնը:
Ինչպէս երևում է, կան մարդիկ, որոնք ընդունում են այն կարծիքը, որ հեղինակի կենդանութեան ժամանակ կարելի է խմբագրել նրա գրութեանը, իսկ մահից

յետոյ պէտք է այն աստիճան սուրբ համարել այդ գրութեանը, որ չը պէտք է փոխել գրութեանը և ոչ մի կէտ:
Կա կատարելագոյն սխալ կարծիք է: Ինչպէս յայտնի է երկու աշխարհահռչակ գրողներ Շէկսպիր և Մօլիէր շատ անգամ այն աստիճան մերկ, չը բողբոջված ոճեր էին գործ ածում իրանց գրութեանը, որ այժմ բնի վրա անհնարին է լինում արտասանել այդ երկու հանձարների շատ անգամ անվայել ասացումները: Եւ այդ տեղերը դուրս են գցվում ոչ թէ միայն նրանց պիէսների ներկայացման ժամանակ, բայց և նրանց գրութեան հրատարակութիւնների մի քանիների միջից այդ տեսակ տեղերը դուրս են գցվում:
Այժմ մեր հանգուցիալ վիպագրող Բաֆֆի այրին էլ, տպագրելով հանգուցիալ մի փոքրիկ գրութեանը «Մշակ» մէջ, նոյն տեսակ բան է արել. նա անխախտ թողնելով հեղինակի ամբողջ դատողութիւնները, հանել է գրութեանը մի քանի վերաւորական տողեր. երբեք զեռ կենդանի գրական ժամանակակից գործիչներից, որպէս զի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱԼՈՄԷ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Մենակութիւնը շատ էր նեղացնում ինձ, ասում էի, բայց մերթ ընդ մերթ և այնպիսի տրամադրութիւն էր գալի վրաս, որ ոչ թէ նորէն Պ. Վ. Կետ միանայի, այլ թէ ճանապարհներ և միջոցներ էի որոնում միանգամ ընդ միշտ կարել նրա հետ ունեցած ամենայն կապերս: Ահա այնպիսի տրամադրութեան տակ գնացի մէկ օր յայտնի իրաւաբան Մ. Ի մօտ խնդրել նրանից տալ ինձ պարտ ու պատշաճ տեղեկութիւններ ապահարգան ստանալու համար: Բայց իմ բաղից նրան տանը չը գտայ, և ինձ հրաւիրեցին նրա քարտուղարի մօտ: Որքան մեծ եղաւ վարմանքս, երբ գրասենյակի մօտ նստած տեսայ Մարգարի տղայ միւրդա Գալուստին: Երբ մտայ ներս, նա ըստ երևոյթին խորատուգլակ էր թղթերի ընթերցանութեան մէջ և մի կարծ միջոց մնացել էի գրասենյակի մօտ կանգնած, մինչև որ «միջոց» գլուխը

չը բարձրացրեց և չը նայեց վրաս: Ինչ թագնեմ. ինձ թւաց, որ նա կոմպոզիտ էր խաղում իր այդ ընթերցանութեամբ, և երբի ուղում էր ինձ ցոյց տալ իր քարտուղարական պայծառ գրութիւնը: Եւ չը կարողացայ զսպել իմ ժպիտը: Նա իսկոյն կորցրեց իր պօղիցիան, երբ նկատեց իմ երեսին այդ հեղինակաւ ժպիտը, և այսպէս մեր զերբեր փոխվեցան. նա սկսեց մի ինչ որ մրմնջալ ու լռեց:
— Ես ուղում էի Մ. Ի հետ տեսնել, ընդհատեցի բօլակական լուսթիւնը, ցանկանալով միջոց տալ միւրդա Գալուստին դուրս գալ իր ծիծաղելի շփոթութիւնից:
— Նա երէկ գնաց Գ. և տասը տասներկու օրից առաջ չի վերադառնալ: Կարելի է, որ վաղ գործ ունէր, այն ժամանակ ևս կարող եմ ձեռք առնել:
Մենք սկզբում ռուսերէն էինք խօսում: Միւրդա Գալուստը ամենաանողորմ կերպով էր վարվում ռուսերէն լեզուի հետ: Նեղ տեղի ընկած ժամանակ հայերէն բառեր գործ կածէր: Անհատաւոր բան էր, որ նա դատաստանական գործերով պարպելիս լինէր, բայց ինչ անէր, երբ սպասուորը շատ պարզ մեկնեց թէ պ. աղօլկատը տանը չէ և այժմ այնտեղներն ընդունում է նրա քար-

այժմ չը վերադառնէ նրանց անձնագրէս և կրքերը չը շարժէ արդէն մեռած մարդու դէմ: Նա վարվել է խելացի կերպով և որպէս մեռած մարդու մի գրութեան շատ հասկացող խմբագիր: Եւ նա չէ ջնջել, չէ օջնացրել գրութեան միջից այդ տեղերը, որպէս իր մանուկների խնամակալուհի, նա անխախտ թողել է ձեռագիրը, որը Բաֆֆի ժառանգների սեփականութիւնն է, նա տպագրութեանը միայն չէ յանձնել այդ տառ կամ տառ և երկու անգամ անգամ անգամ: Գրանով գրութեանը չէ աղաւաղվում, քանի որ ամբողջ կրթական մասը, բոլոր դատողութիւնները անփոփոխ մնում են, իսկ որտեղ հեղինակը ընդհանուր դատողութիւններից անցնելով անձնին, մասնաւորութեանը է իր ասածները, մասնացոյց անելով երեք անձինքների վրա, այդ տեղերը, որոնք ոչինչ չեն աւելացնում գրութեան իմաստին, ոչինչ չեն պակասեցնում ընդհանուր իմաստը, — այդ տեղերը հանված են տպագրութիւնից, բայց թողնված են ձեռագրի մէջ:
Բառերի իմաստը պէտք է հասկանալ, այրիի արածը մի գրութեան էր, մի խոհանութիւն էր, որը դործ է ածվում ամեն երկրի հանգուցեանների գրութեանը վերաբերմամբ, երբ դեռ կենդանի են մեռածի հակառակորդները: Բաֆֆի գրութեանը այն ժամանակ աղաւաղված կը լինէր, եթէ նրա գրութեան իմաստը փոփոխութեան ենթարկվէր, եթէ նրա հայեացքներն ու ընդհանրութիւն, ուրիշ գոյն տրվէր:
Աղաւաղել, искажать, altérer, — բոլորովին ուրիշ միտք, ուրիշ նշանակութիւն ունի, քան թէ ընդհանուր դատողութիւններից դուրս գցել մասնաւոր տեղերը, որոնք թէև հետեւանք են ընդհանուր դատողութեան, բայց շոշափում են բացարձակապէս անձնաւորութիւնները, պարտաւորելով իրանց մէջ կենդանի անձինքներին վերաբերեալ վերաւորել խօսքերը:
Դիցուք մի ռուս գրողի, Տուրգենևի, կամ ուրիշ մահից յետոյ մնացել է մի գրութեան, որտեղ հանգուցեալը պակասարժեք է ժամանակակից ռուս գրականութիւնը և մամուլը, պնդելով որ այժմեան ռուս գրողների մեծ մասը համոզմունքից դուրս են, ծախում են իրանց գրութեանը տողերի քանակութեամբ, փոփոխում են իրանց համոզմունքները խմբագրութիւնների պահանջման համեմատ: Այդ տեսակ դատողութիւնները մեղ համար հետաքրքիր են, նոյն իսկ թանկագին են. բայց ինչի համար, երբ հեղինակը իր միտքը յայտնել է ար-

դէն, տպագրելը այդ գրութեանը անպատշաճ տպագրելով և այն տեղերը, որտեղ հեղինակը իր անխախտ գրողների անուններն էլ է բերում, պարզ յիշելով նրանց, կամ մասնացոյց անելով այն խմբագրութիւնների վրա, որոնց հրատարակութիւններն նրանց մասնակցել են: Հանելով այդ մասնաւոր, անձնական տեղերը, յօդուածի ամբողջութիւնը, գրողի հայեացքների ամբողջութիւնը, չէ փոխվում, չէ խախտվում: Իսկ տպագրելով այդ մասնաւոր և շատ անգամ անձանց վերաւորող տեղերը մենք նսեմացնում ենք ամբողջ յօդուածի միտքը, քանի որ յօդուածի ընդհանուր դատողութիւններից դարձնում ենք հասարակութեան ուղիղ հանգուցեալ անձնական յարաբերութիւնների վրա դէպի իր եղած հակառակորդները:
Կան շատ անգամ և ուրիշ հանգամանքներ, որոնք միջոց չեն տալիս գրողի մահից յետոյ երկար ժամանակ տպագրել նրա գրութեանը ամբողջութեամբ: Պաշտօնի, Լէրմոնովի տպագրած հեղինակութիւններից շատերը մինչև այժմ էլ չեն տպագրված ամբողջութեամբ: Միջոց հանված են շատ տեղեր, բայց զրանով այդ անմահ գրողների հեղինակութիւնները չէ կարելի աղաւաղված համարել...
Նրանց մէջ անխախտ մնացել է ընդհանուրը, տպակից ոչ մի միտք չէ փոխված, բայց մասնաւոր տեղեր, որոնք գուցէ և լրացնում էին ամբողջութիւնը: Ինչ տեղադրված: Գրանով գրութեանը չէ աղաւաղված, այլ միայն լրիւ չէ տպված:
Աղաւաղել նշանակում է փոխել գրութեան միտքը, իմաստը: Բայց լրացուցիչ, ոչ և ակն տեղերը դուրս գցել, որոնք հանվելով էլ գրութեանը ընդհանուր իմաստը չեն փոխում: Ինչ նշանակում աղաւաղել: Բաֆֆի ոչ «խելութ», ոչ «կայծեր» այս կամ այն հանգամանքի շնորհիվ լրիւ չեն տպված, — բայց զրանով այդ վէպերից ոչ մէկը չէ աղաւաղված, այլ միայն այնպէս ամբողջացրած չէ, ինչպէս ինքն հեղինակն էր ուզում...
Հէյնէի գրութեանը թէ իր կենդանութեան ժամանակ, թէ իր մահից բաւական ժամանակ անցնելուց յետոյ ամբողջութեամբ չէին տպագրվում Գերմանիայից: Բայց զրանով Հէյնէի գրութեանը ոչ իմաստն է փոխվել, ոչ էլ պակասել է նրանց նշանակութիւնն ու հասարակութեան վերա ունեցած ազդեցութիւնը:
Մենք ասեցինք, որ Մօլիէրի, Շէկսպիրի պէս աշխարհահռչակ գրողների հեղինակութիւններից էլ դուրս են գցվում տպա-

բարդ եմ, ես ըստ ոտի տակի հողն եմ. ամեն բան էս սահմանի պիտի մեկնեմ... Այ, էս գրքի մէջ ա ամեն բանը գրած... Համա չը պիտի նեղանաս, որ միտք բերած էս օրը է, որ քեզ ես վարդ գցեցի, դու իմ էս երեսիս թեցի: Միտք ա, խառնում ջան: Աստուծոյ մասն ա հմ. սկի մի նեղաջիր... Ինչ որ անես առաջը կը դայ...
Ձը գիտէի ինչպէս վերջ տալ այս անտեղի նկատողութիւններին: Իմ պաշտպան իրաւաբանը դատաւարի դեր էր ընդունել. երեսուրդ էր տալիս իմ արարքը: Այժմ ես էի ընկել շփոթութեան մէջ...
— Էլի: Խնդրում եմ, խանում ջան, մի նեղացիր: Մօսէս մարդաբէն ա ասել. «Հանք ապան, ատամն ա տալիս», գրաբարից լաւ գլուխ էիմ հանում, համա միտքը սառն քի աչքի տեղ աչք հանի, կեռիքի տեղ—կեռիք... Հիմի արի տեսնեմք մաղղաթող ընկելու համար ինչ ճանապարհներ կան: Ստեղ մին պապիրոս կպցնեմ, որ զամաղով կարելու է ձամեցէք, կորէկի պապիրոս ա. դուք չէք քաշում...
Ես ապշած սրա այդքան յանդգնութիւնից, մնացել էի սառած կանգնած:
— Օրհնեցեքը ասում են քի մարդ ու կնիկը

կարծիք, որ այդպիսի միջնորդութիւն ոչ թէ միայն չէ կարող կազմակերպել, այլ և գործ տեսնել էլ չէ կարող:

—Լոնդոնից հեռագրում են, որ իրանական յայտնի դորո՞ղ Օրբայն դատապարտվեց վեցամսեայ բանտարկութեան այն պատճառով, որ նա զրգում է եղել կապալառուներին չը տալ կապալադրամները կալուածատէրերին:

—Սօֆիայից հեռագրում են, որ պրինց Ֆերդինանդ կոբուրգեանին մի քանի խնդրանքներ են ներկայացված՝ այժման միջնորդութեան դէմ:

—Փարիզից գրում են, որ պատգամաւորների ժողովի ան նիստը, որի ժամանակ Ֆլոկէի միջնորդութիւնը հրաժարական տուեց, շատ բաղմամարդ էր: Նիստին ներկայ էին համարեա թէ բոլոր պատգամաւորները և բազմութեան արտասովոր քանակութիւնը:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

«Արձագանք» շաբաթաթերթը նորից գլուխը բարձրացրել է, և սկսել է կրկին «Մշակույթ» լրջնել իր էջերը, իբր թէ հասարակական շահեր (օճ) պաշտպանելու մտքով... Հասարակական շահեր էր պաշտպանում գլուխը կորցրած մեր շաբաթաթերթը և անցեալ տարի, սկզբից մինչև վերջ «Մշակույթ» տողերի դէմ կռիւով... Բայց հէնց որ զեկանքները հասաւ, խնդր շաբաթաթերթը միանգամայն պաշտանկվեց, և այդ պաշտանկվելու տեսք մինչև այս յոշնակարի վերջը: Իսկ փետրվարի սկզբից պաշտանկված շաբաթաթերթի լեզուն նորից բացվեց: Միամիտ ընթերցողները, որոնք «Արձագանք» տաղաւարտակրներին մօտ խորամանկութեան դասեր չեն առել, ի հարկէ չեն հասկնայ որ այդ անպատշաճ լուծումները, որ սկսվեց զեկանքներին և տեսեց մինչև յոշնակարի վերջը, բաժանորդագրութեան պատճառով էր: Երբ բաժանորդագրութեան հարցը մէջ տեղ եկաւ, «Արձագանք» մոռացաւ ուրիշ բոլոր հարցերը, և Զաքարյայի նման պաշտանկվեց... Այժմ բաժանորդագրութեան հարցը անցաւ, և հոգնվարք շաբաթաթերթը տեսնելով իր ստացած հարուածների հետևանքը, և լաւ իմանալով որ այլ ևս կորցնելու չառ բան չունի, նորից սկսել է իր երկու ջոկատ և մի կենտ ընթերցողների զանգնեալ տանել իր սովորական նէխնիներով... Մենք այսպէս էլ սպասում էինք, պարզ գիտնէր որ ուրիշ կերպ ապրել չեն կարող, և կարող ենք հաստատել, որ «Արձագանք» նիւթը բաւական կը լինի մեր գրական բոլոր պարագիտներին համար: Թող չը յուսահատուին...

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ԱՍՍԱՐԱԳԻ, 13 փետրվարի: Ապանական գողթողները հաղորդում են մի ազգանական դորաբաժի արշաւանքի մասին դէպի Հերատ: Արդուբանան-խանը այժմ գտնվում է Զարիլիւղում: ՊԵՇԵ, 13 փետրվարի: Ունդարայի դանաղան գաւառական քաղաքներից լուրեր են ստացված, զանազան տեղի ունեցած փողոցային ցոյցերի մասին: զինուորական օրինագծերի դէմ բողոքելու նպատակով այն ցոյցերի նմանութեամբ, որոնք նորերս տեղի են ունեցել Պէշտում: Ոչ մի տեղ ընդհարում չէ եղել:

ՊԵՇԵՐՈՒՐԳ, 15 փետրվարի: Երէկ տվածական ընկերութեան հանգիստը նիստ կար Հաշ-

ւից երեւում է, որ ընկերութեան դրամագլուխը 209,646 ռուբլի է: Պ. Սուրէշվիլի Գոստոնիսկու յիշատակին նուիրված մի ճառ կարդաց: Փետրվարի 13-ին Մոսկվայում վախճանվեց Պետերբուրգի կոնստիտուցիայի նախկին ղեկավար Գալիցով:

ՓԱՐԻԶ, 15 փետրվարի: Արմատական Լաֆոն մի առաջարկութիւն ներկայացրեց պատգամաւորների ժողովին, որպէս զի մի և նոյն անձը միայն երկու շրջաններում կարողանայ հանդէս գալ, որպէս կանդիդատ պատգամաւոր ընտրվելու համար: Այդ առաջարկութիւնը, որը ուղղված է Բուլանժէի դէմ, յանձնված է յանձնաժողովին:

ՎԻԵՆՆԱ, 15 փետրվարի: Մայիսին աւստրիական ընդհանուր շտաբի օֆիցերներին մի խումբ վարժվելու նպատակով կերթայ Գալիչինա էրցհերցոգ Ալբրէխտի ղեկավարութեամբ և ընդհանուր շտաբի գլխաւոր: Բէկի մասնակցութեամբ:

Ս. ՊԵՇԵՐՈՒՐԳԻ ԲՈՐՈՍ

Փետրվարի 14-ին	
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծաթ	93 ր. 26 »
Համբուրգի վրա 100 մարկ	45 » 70 »
Փարիզի վրա 100 ֆրանկ	36 » 80 »
Ռուսի — արծաթ	7 » 44 »
Մարսայի կուպոններ	149 » — »
Արձաթի	1 » 10 »
Բորսայի զինուորներ	5 1/4 և 6 1/2 0/0
Պետական բանկի 5 0/0 տոմս 1-ին շրջանի	98 » 75 »
— — — — — 2-րդ —	98 » 75 »
— — — — — 3-րդ —	98 » 25 »
— — — — — 4-րդ —	98 » 75 »
— — — — — 5-րդ —	98 » 75 »
Ռուսիայի փոխառութիւն	— » — »
Նոր 4 0/0 փոխառութիւն	83 » 50 »
Արեւելեան 5 0/0 փոխառութիւն 1-ին շրջ.	99 » 50 »
— — — — — 2-րդ —	99 » 50 »
— — — — — 3-րդ —	99 » 50 »
Ներքին 5 0/0 առաջին փոխառութիւն	275 » — »
— — — — — երկրորդ —	254 » 25 »
5 1/2 0/0 ընդհանուր	102 » 50 »
Ռուսիայի ընդհանուր	148 » — »
Եւրոպայի կոնսոլիդացած փոխառութիւն	169 » 50 »
Նոր երկաթուղային ընդհանուր	99 » 25 »
5 0/0 գրաւական թղթեր կալուած.	— » — »
— — — — — Թղթաւոր —	92 » 75 »
— — — — — Թղթաւոր —	98 » — »
5 1/2 0/0 գրաւական թղթեր խորհրդի կալուած բանկի	99 » — »
6 0/0 գրաւ. թղթ. Խորհրդի կալ. բանկ	102 » — »
— — — — — Պոլտավայի —	101 » — »
— — — — — Պետ. Զուլտի —	100 » 75 »
— — — — — Նիւիլի —	101 » 50 »
— — — — — Մոսկվայի —	101 » 50 »
— — — — — Բեսարաբ. Զաւր. —	100 » — »
— — — — — Նիւի. Սամար. —	101 » — »
— — — — — Վիլնայի —	100 » 25 »
— — — — — Թիֆլիսի — 72 և — — —	— » — »
— — — — — Քուրմայիւի — 18 և — — —	— » — »

Վճարված-կամակի բանկի ակցիաները 730 »
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 236 » 50 »
Բիւրնակ-Բոլոգոյի ընկ. 93 » — »
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդն. գաղութները 93 » 75 »
Մոսկվայի քաղաք. օրդն. գաղութները 93 » 50 »
Օդէսայի — 94 » 62 »
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրդ. — » — »
Ս. Պետերբուրգի բորսայի տրամագրութիւնը հանդարտ է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՊՐՈԿԻՉՈՐ Ա. ՇՏԻՍԻՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՍԱՐՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԵՄ

ՊՐՈԿԻՉԱՆ ԱՍԱՐՆԱԳԻՆ ԿԱԹԻՆԵՐ 50 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈԿՍԵՆՆԱՆ ԱՍԱՐՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍԱՐՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍ.

ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կողմասեան ղեղա-վաճառատան, և պ. պ. Շաշ-պարոնեանցի, Մակէլի, Սէնչի-կովսկու և Ազմուրովի ղեղա-տներում: ԲԱԳՈՒԻ մէջ, Բէկէլի մօտ, ԳՈՒՓԱՅԻՍՈՒՄ՝ Կօկօշկի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻՍ՝ Բրօննօցկու մօտ և ԵԿԱՆԻՆՕԴԱՐՈՒՄ՝

УБНЫЯ КАПЛИ: КОР. 50 К.
УБНОЙ ПОРОШОК: КОР. 30 К.
УБНОЙ ЭЛИКСИР: КОР. 80 К.
АШТЕКЕР
1—52 (Հ.)

Յանձնվեց տպագրութեան

Փոխարէն «ԴԱՇՆԱԿ» ժողովածուի Շէքսպիրի

ՀԱՄԼԵՏ

ՔԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ ՍԵՆՔՏԵՐԻՄ ԱՐԾՐՈՒՆԻ

Հրատարակել: ԲԱՐՍԵՂ ԳԱՄԱԼՆԱՆ

ВЪ ЖИРАРДОВСКОМЪ СКЛАДѢ
Дворцовая улица, КАРАВАНСАРАЙ БЫВШ. АРЦРУНИ
ԺԻՐԱՐԴՈՎՍԿԱՆ ՊԱՀԵՍՈՒՄ
Կօրցօվայա փողոցում, նախկին Արծրունի բարձնասարայում
ԱՍՏՅԱՎԱՍ ԵՆ
ԲՐԻԵԱՅ ՎԵՐՄԱԿՆԵՐ ամենաէական գներից մինչև ամենաթանգ գները:
ԴՈՆԵՐ և ԼԵՑՏ
10—10 (Հ)

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ր
ԱՐԻՍՏՈՐ ՈՄ՝ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ
ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԴԻՐԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ
Գինն է 3 ռուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է:
Միանուագ քանից աւելի գնողին զիջումն կը լինի:
Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԵՍ Խիդիկէի և ընկ. զրաւաճառանցում, Թիֆ-լիս, Գոլովինսկի Պրօսպեկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ:
33—40

ԿՈՇԱԿԱՐԻ ԱՐՀԵՍԱՆՈՑ
ԱՂԱՍԻ ՏԵՐ-ՋԱՔԱՐԵԱՆԻ
Գալովինսկի, առաջ Բէկէլի, № 11.
Ընդունում է կանանց և տղամարդոց ամեն տեսակ կօշիկնե-րի պատէրներ, ՋԱՔԱՌՈՐ ԳՆԵՐՈՎ. պատրաստվում են շու-տով: Պատէրները ընդունվում են խառնութեամբ, պատրաստե-լուց յետոյ կարելի է ստանալ միայն խառնութեամբ, առան չէ ու-ղարկվում:
10—10

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ


(կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են աժեն օր

ԱՌԱՌՕՏԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ—9—11 փ. վիրաբուժական, նաև տատանացաւի, սիֆիլիսի և աչքի.
ՐՈՒԴԻՎՈՎՍԿԻ—10—11 փ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆԻՐԻՇԿԻ ԻՍԱՀԱԿԵԱՆՅ—11 1/2—12 փ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԻՎՍԿԻ—11—12 փ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի:
ԱՐՏԵՄԻՆՎ—12—1 փ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՅ—12—1 փ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:
ԵՐԵՎԱՆԵՐԸ
ԳԱԴՕՄՍԿԻ—4 1/2—5 1/2 փ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ—5 1/2—6 1/2 փ.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 փ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրօտեքապիա):
Հիւանդանոցում է մահկաբարձուհի Մօզլեր:
Վճար—50 կ. Համալսարանի (կօմսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ և ԻՄԵՐԷԹԻ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ
ատենի մէջ նշանակած է ածուրդ սոյն փետրվարի 24-ին, առանց կրկնաձուրդի, կա-պալով տարու համար էջմիաճնապատկան մի կրպակի, հանդերձ փեշտախտի, որ գտն-վում է Բազաղկանայում: Թիֆլիսում:
1—3



Въ редакція газеты „МШАКЪ“ прода-ются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич- лекція Д—ра Г. Арпруни, перев. съ арм. А. Аравелянца. Цѣна 25 в. 2) Die Oeko- nomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni über- setzt von Amiranjanjanz. Preis 20 kop. Иногородные, желающие получить бро- шюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (Հ)